

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ  
ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅԱՆ ՁԱՏԱԳՈՎ

*Բանալի բառեր – Հովհաննես Թումանյան, Տիցիան Տաբիձե, Գրիգոր Ռոբաքիձե, Լոռի, Թիֆլիս, Հայաստան, Վրաստան, հայ մեծ բանաստեղծ, վրաց ժողովուրդ, բարեկամության ուսուցիչ, ազգամիջյան բախումներ, վրացական մամուլ*

Ազգերի եղբայրացման ոսկե օղակն էր Հովհաննեսը կովկասյան ժողովուրդների միջև, և որպես այդպիսին անմահ պիտի մնա նրա հոյակապ պատկերը...

Ավ. Բսահալյան

Հովհաննես Թումանյանը (1869-1923) ճիշտ ժամանակին ընկալեց ու գնահատեց եղբայրությունը խորհրդանշող այն գեղեցիկ լեզունդի իմաստն ու խորհուրդը, ըստ որի՝ պատմությունը Հայոսին և Քարթլոսին խոստովանել է, որ վաղ անցյալում նրանք մի ընդհանուր նախահայր են ունեցել: Նա նաև վկայեց, որ ժողովուրդների հիշողությունը, պատմական վկայությունների ու իրադարձությունների հիշողությունից բացի, նաև սրտի և արյան հիշողություն է, որն անցնում է դարից դար, հազարամյակից հազարամյակ:

Հայ մեծ բանաստեղծը հայ և վրաց ժողովուրդներին պատգամել է ամեն ինչին նայել բարեկամական սիրո բարձունքից. սեր, որ վեհացնում է, սեր, որ արարում է, սեր, որ միաբանում է և ջերմացնում: Նա միշտ հետևում էր Վրաստանում տեղի ունեցող պատմական, գրական-մշակութային անցուդարձերին և նշանակալից իրադարձությունները հայ և վրաց մտավորականների հետ հաճախ նույնիսկ սեփական տանն էր նշում կամ այդ առիթով հավաքույթներ էր անցկացնում և բարեկամությունն ամրապնդելու նորանոր գաղափարներ առաջադրում:

Թումանյանը Վրաստանի և վրաց ժողովրդի նկատմամբ միշտ առանձնահատուկ համակրանք էր տածում. «Ինչքան ինձ համար թանկ են Վրաստանն ու վրացական սքանչելի հոգին, նույնքան էլ թանկ են և այն մարդիկ, որոնք հանդիսանում են կրողներն ու մեկնաբանները այդ հոգու»: Նա ընդգծում էր հայ և վրաց ժողովուրդների պատմական ճակատագրի ընդհանրությունը, նրանց բարեկամությունը. «Միտք կապն է ապահովել մեր ժողովուրդների պատմական կյանքի հաջողությունները»<sup>1</sup>: Այս միտքը մեր

<sup>1</sup> **Թումանյան Հովհ.**, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. 10, Երևան, 1999, էջ 700:

մեծանուն բանաստեղծներից մեկն արտահայտել է նաև բանաստեղծությամբ.

*Եղբայրներ են ծնված օրից  
Աշխարհում հայն ու վրացին,  
Եվ դառնություն չի խառնվել  
Երբեք նրանց աղուհացին<sup>1</sup>:*

Թումանյանը վաղ պատանեկությունից ապրել ու ստեղծագործել է Վրաստանի մայրաքաղաքում: Երիտասարդական տարիներից նա չթուլացող հետաքրքրություն է ցուցաբերել այդ երկրի նկատմամբ, հանգամանորեն ուսումնասիրել նրա կեցությունն ու կացությունը, շփվել «արի, բարի» ընկերների հետ, նրանց հետ կապվել ջերմ զգացումներով և ամեն առիթ օգտագործել վրաց ժողովրդի մասին իր հսկայական գիտելիքները հանրայնացնելու համար: «Ն. Բարաթաշվիլու դամբանի վերա», «Վրաստանի ոգին», «Վրաստանի համար» «Նվեր Վրաստանի բանաստեղծներին» և այլ ստեղծագործություններում ժողովրդասեր գրողը անկեղծորեն, սրտառուչ հայտնում է բարիդրացիության, բարեկամության ու եղբայրության իր վեհ գաղափարները:

*Ելնե՛ նք՝ տեսով ու ճանանչով,  
Ընկեր, ախպեր, մեր ու քուր՝  
Մեր քյամանչով, ուրախ կանչով  
Գընանք դեպ կյանքն ընդհանուր<sup>2</sup>:*

Ի դեպ, այս կոչը ոչ թե 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջման արձագանքն էր, այլ պայմանավորված էր Հայաստանի առաջին Հանրապետության հաղթանակով:

«Հովհաննեսը խորապես զգում է Վրաստանը: Վրաստանի ծնունդ վրացու հազվադեպ եմ հանդիպել, որ նրա չափ ճանաչեր ու ընկալեր Վրաստանի եությունը»<sup>3</sup>, – գրել է նրա կրտսեր ժամանակակից և թերևս վրացի ամենամտերիմ բարեկամներից մեկը՝ ականավոր գրող, դրամատուրգ, բանաստեղծ, գրականագետ, արվեստաբան, փիլիսոփա Գրիգոր Ռոբաքիձեն (1880-1962): Եթե նրա անունը 1910-1920-ական թվականներին թնդում էր համայն Վրաստանում, ապա 1930 թ. հետո՝ ընդհուպ խորհրդային կարգերի փլուզումը, նա ոչ միայն արգելված էր իբրև սոցիալիստական հայրենիքի «դավաճան», այլև նրա անունը տալն անգամ վտանգավոր էր:

<sup>1</sup> Սահյան Հ., Վրաց ժողովրդին // «Գրական թերթ», 27 փետրվարի 1987:

<sup>2</sup> Թումանյան Հովհ., նշվ. աշխ., հ. 1, Երևան, 1988, էջ 305:

<sup>3</sup> Րոճայիժե Ջ., օջանցե Նաոյելո // «Րաբոժոնո», 8 ձրոլո1923.

Ռոբարթիձեի հուշերը, որ լույս են տեսել համավրացական նոր գրականության օրգան «Ռուբիկոնի»<sup>1</sup> շաբաթաթերթի 1923 թ. ապրիլի 8-ի համարում՝ «Հովհաննես Լուսեղեն» վերնագրով, սկսվում են հետևյալ տողերով. «Բանաստեղծի մահը քանաստեղծի համար իր մահն է, առավել ևս Հովհաննես Թումանյանի մահը: Շատ մեծ է մեր վիշտը, որովհետև Հովհաննեսը Մարդ էր: Հովհաննեսը Բանաստեղծ էր: Հովհաննեսը Բարեկամ էր: Եվ ամեն ինչում կատարելապես լուսեղեն... Հոգին՝ ամենատես, բարի, Բարձրյալի պես միշտ խանդավառ: Միրտը՝ պարզ, բաց, կրակված, մանկական, անպական»<sup>2</sup>: Հիրավի, այսպես խոսուն է հայ մեծ քանաստեղծին վրաց մեծ քանաստեղծի տված գնահատականը:

Թումանյանն իր կրտսեր բարեկամին նվիրել է մի քառյակ՝ ի դեմս «սգավոր եղբոր», որը պետք է գրված լինի ազգամիջյան ընդհարումների օրերին: «Սգավոր եղբայրը» այցի է գնում իր «վշտահար եղբորը», ով համակված է նույն հոգսով և նույն ցավով.

*Բնջ դալուկ ես քու երկրի պես ու սրգավոր դու էսօր,  
Բայց ողջ ու վեհ քան երբևէ, թովիչ ու խոր դու էսօր.  
Եղբորդ մոտ եկած վրշտոտ՝ տանջում ես նոր դու էսօր,  
Տանջանք անվերջ իմ սրբոտի մեջ ու սեր հրգոր, դու էսօր»<sup>3</sup>:*

Եղբայրները սգավոր ու վշտահար էին, որովհետև 1918 թ. վերջերին աղետաբեր ամպեր էին կուտակվել Հայաստանի և Վրաստանի երկնակամարում: Թումանյանը պարզապես համօրյա մարտնչում էր դրանք ցրելու և երկու երկրների միջև խաղաղությունը վերահաստատելու համար: Այդ բախտորոշ պահին նրան է դիմում քանաստեղծ Տիցիան Տաբիձեն (1895-1937), որը նույնպես մտերմական ջերմագին կապեր ուներ նրա հետ և լիովին համոզված էր, որ ճակատագրական պահին «մեկ ուրիշի ձայնը չի հնչի և չի լինի այնպես ճշմարիտ ու հասկանալի, ինչպես լուսավորյալ քանաստեղծինն ու հայրենասերինը», և նկատի ունենալով նրա վիթխարի հեղինակությունը Անդրկովկասի ժողովուրդների մեջ առհասարակ՝ բաց նամակ է հղում՝ հաղորդակից դարձնելով իր մտորումներին ու անհանգստությանը<sup>4</sup>:

Սպասելով երկու կառավարությունների միջև հաշտության բանակցությունների ավարտին՝ 1918 թ. դեկտեմբերի վերջերին հայ քանաստեղծը «եղբայրական գրույց է սկսում իր ազնիվ բարեկամի հետ»՝ պատասխանելով ընդարձակ մի նամակով, որտեղ վերլուծում է հայ-վրացական պատերազմը,

---

<sup>1</sup> «Ռուբիկոնի» թերթի գգալի մասը նվիրված է հայ մեծ քանաստեղծի հիշատակին՝ գծանկար, հուշագրություններ, երկու քանաստեղծություն, մահախոսական, ցավակցական հեռագրեր ընտանիքին և հայ ժողովրդին:

<sup>2</sup> **Րոծայիծյ ջ.**, Օջանց Նաթելո // «Րոծոյոն», 8 ձրոլո1923.

<sup>3</sup> **Թումանյան Հովհ.**, նշվ. աշխ., հ. 2, Երևան, 1990, էջ 86:

<sup>4</sup> Տե՛ս **Նաթոյ ջ.**, Լոյ Ֆրոլո Օջանց տլմանոն // «Նայարտցելո», 1919, N 1:

դատապարտում ուժի կիրառումը հարևան ժողովուրդների միջև<sup>1</sup>:

Նույն խնդրին լուծում գտնելու համար այդ օրերին վրացի մտավորականների հետ, որոնց թվում էր նաև Տաբիձեն, իր բնակարանում հանդիպման ժամանակ Թումանյանն ասում է. «Վերջապես, մենք՝ քանաստեղծներս, ավելի իրավունք ունենք մեր հաշտության ձայնը բարձրացնելու, երբ ժողովրդի արյունն է հոսում, քան իշխանությունները, որովհետև մենք ենք ժողովրդի կոչված ներկայացուցիչները, մե՛նք ենք, որ վշտանում ենք նրա տառապանքով և խնդում նրա ուրախությամբ»<sup>2</sup>:

1919 թ. փետրվարի 20-ին Տաբիձեն «Մաքարթվելո» թերթում շնորհավորում է Թումանյանի ծննդյան 50-ամյակը՝ այդ հոբելյանը համարելով «Կովկասի գրականության տոն և ժողովուրդների համերաշխության գաղափարների լավագույն ամրակայում», որի համար մարտի 10-ին նույն թերթի խմբագրությանը Թումանյանը շնորհակալություն է հայտնում. «Սրտագին շնորհակալ եմ «Մաքարթվելո»-ի շնորհավորանքների և բարեմաղթությունների համար, որ արել է իմ թանկագին ընկեր և բարեկամ Տիցիան Տաբիձեի միջոցով»<sup>3</sup>:

Թումանյանի մահվան առիթով գրած իր հուշերում Տաբիձեն դարձյալ անդրադառնում է իրենց ծանոթության, մտերմության հանգամանքներին, վրաց մտավորականության վրա Թումանյանի ունեցած ազդեցությանը և Անդրկովկասի ժողովուրդների հարաբերությունները խորացնելու ու նոր բովանդակություն հաղորդելու նրա գործուն ջանքերին: Նա հուշերի էջը փակում է հետևյալ պատկերավոր բնութագրումով. «Ես չեմ կարող պատկերացնել Հովհաննեսի կյանքի վերջին օրերը, բայց համոզված եմ, որ նա՝ բարձրահասակ, ճերմակահեղ և լուսեղեն դեմքով այդ մարդը, ով իր ամբողջ կյանքն անցկացրեց սիրո քարոզով, վերջին պահին էլ, վստահ եմ, իբրև աստվածային պատգամախոս, կյանքն ավարտել է հավերժ հավատարմության մասին խոսքերով, ինչպես Հովհաննես առաքյալը, որին վերջին անգամ աշակերտները դուրս բերեցին ժողովրդի առաջ, և նա, արցունքն աչքերին, ասաց. «Միրեցէ ք զմիմեանս»<sup>4</sup>: Ահա այսպես պատկերավոր ու գեղեցիկ է ներկայացնում Թումանյան մարդու և քանաստեղծի մեծությունը մեծ հոգուտեր վրացի բարեկամը:

Տաբիձեն վրաց գրողների պատվիրակության կազմում 1929 թ. հունիսին ժամանել է Հայաստան, շրջագայել, գրել քանաստեղծությունների շարք, որոնցից մեկը՝ «Իրականացավ երազանքը պոետների» խորագրով՝ նվիրված է Հովհ. Թումանյանին: Հեղինակը նշում է խորհրդային տարիներին հայոց աշխարհում կատարված առաջընթացի մասին և պարտավորվում գրչակից

<sup>1</sup> Տե՛ս **Թումանյան Հովհ.**, նշվ. աշխ., հ. 7, Երևան, 1995, էջ 374:

<sup>2</sup> Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1969, էջ 628:

<sup>3</sup> **Թումանյան Հովհ.**, նշվ. աշխ., հ. 10, Երևան, 1999, էջ 307:

<sup>4</sup> «Րաբոժոճնո», 8 մարտի 1923.

ընկերների հետ շարունակել բարեկամության, համերաշխության ու եղբայրական հարաբերությունների այն ավանդույթները, որ մեծ հաջողությամբ զարգացնում էր ինքը՝ Թումանյանը:

*Եղբայրներիս հետ եկել եմ ես էլ  
Այս եղբայրությանն ասելու նոր խոսք,  
Այն երգը, որ դու էիր սկսել,  
Կշարունակենք այսօր ահա մենք<sup>1</sup>:*

Հովհ. Թումանյանի մասին վրացի բարեկամներից իմաստալից և շատ կողմերով ուսանելի խոսք առաջինը հրապարակել է գրող, հրապարակախոս Սամսոն Փիրցխալավան (1872-1952): Անվանի գործիչը «գեղեցիկն ըմբռնող և գեղեցիկն արարող հզոր արվեստագետի»՝ Թումանյանի երկերում տեսնում է Հայաստանը, նրա պատմական դառն ճակատագիրը, ժամանակի ողբերգությունը, բնությունը, և հույսը լուսավոր ապագայի նկատմամբ:՝ Նա իր ընթերցողին հավաստիացնում է, որ Հովհ. Թումանյանը «մեր ժամանակի խոշորագույն բանաստեղծներից է, հայ ժողովրդի երդվյալ հավատարմատարը, նրա հոգևոր հարստության, նվիրական զգացումների ու իդեերի լավագույն արտահայտողը»: Ահա ինչու նա արժանացել է համաժողովրդական սիրո, իսկ «այդպես ամեն մի ժողովուրդ սիրում է իր ազգային կերպարը, իր անհատականությունը, իր ազնվությունը»:

Ս. Փիրցխալավան ավստոսանք է հայտնում, որ նման վառ անհատականության ստեղծագործությունները վրացի բանաստեղծներն ու գրականագետները թարգմանությունների կամ գոնե հողվածների միջոցով հանրության սեփականությունը չեն դարձրել, մինչդեռ վստահեցնում է, որ դրանով զգալիորեն կհարստացվեր վրաց գրականության գանձարանը և մեծ ծառայություն կմատուցվեր ազգային գրականության հարստացմանն ու վերածննդին:

Հակիրճ բնութագրումից հետո նա անցում է կատարում Թումանյանի՝ իբրև մարդու ազնվագույն նկարագրին, իբրև քաղաքացու նրա այն վիթխարի ջանքերին, որ նա գործադրել է հանուն հայ և վրաց ժողովուրդների վտանգված բարեկամությունը կարգավորելու գործին, և նշում է, որ նպատակին հասնելու համար նա արիաբար մարտնչում է գրչով ու գործով, հաճախ վտանգում կյանքը, որովհետև «հայ ժողովրդի վեհանձնագույն զավակը և վրաց ժողովրդի ամենասիրելի բարեկամը», առավել քան որևէ մեկը, քաջ գիտակցում է երկու ժողովուրդների համերաշխության ու ի վերուստ նրանց տրված պատմական առաքելության գինը: «Երբ սրվել են մեր և հայերի հարաբերությունները,– շարունակում է հեղինակը,– երբ մատնացույց են արել վրացատյաց հայերին (մի թե քիչ են հայատյաց վրացիները) և ասել, թե

---

<sup>1</sup> Գառնիկ Գ., Երկեր, Երևան, 1934, թ. 9-10.

միայն զենքը վերջ կդնի տարաձայնություններին, իմ աչքի առջև հառնում է Հովհաննես Թումանյանի կերպարը, և ես կասեմ՝ ինչ էլ լինի, ինչ էլ պատահի, այդուհանդերձ, հնարավոր է մեր հաշտությունը»<sup>1</sup>:

Վրաց մտավորականը ինքը ևս ջատագովում էր հայ և վրաց ժողովուրդների մերձեցման, կապերի վերականգնման ու խորացման գաղափարը՝ դա համարելով երկու երկրների քաղաքական ու մշակութային վերածննդի կարևորագույն գործոն: Այդ քայլերի անհապաղ իրականացումը նա անհրաժեշտ, պարզապես երանելի էր համարում, որովհետև Հայաստանն ու Վրաստանն ապրում էին անկախ կյանքով, մինչդեռ շրջապատված էին բազմաթիվ թշնամիներով, որոնք, բացահայտ կամ քողարկված, որոգայթներ էին հյուսում, գործադրում ամեն ջանք՝ զրկելու համար այդ երկրներին ձեռք բերված ազատությունից: Ահա թե ինչու, ամփոփում է մտահոգ գործիչը, «այսպիսի ժամանակ մեկմեկու ձեռք մեկնելը հույժ կարևոր է»:

Ի դեպ, այս կարգի հրապարակումը քաղաքացիական արիություն էր, եթե հաշվի առնենք այն կացությունը, որ երկու երկրների հարաբերություններում ստեղծվել էր 1918 թ. դեկտեմբերին, իսկ եղբայրասպան պատերազմի ավարտից հետո նոր-նոր հաշտության բանակցություններ էին ընթանում:

Հոդվածի տպագրությունից անցել է մեկ դար, բայց այն ուսանելի է հենց այժմ, քանզի ունի խորապես արդիական հնչեղություն: Վերջին տարիներին առանձին թերուսներ ցանկանում են սասանել բարեկամության դարավոր հիմքերը, օտարել բարեկամ ժողովուրդներին, բարեկամ երկրներին, բարեկամ մշակույթները և նույնիսկ բարեկամ մարդկանց: Մինչդեռ գրիչ վերցնող յուրաքանչյուր ոք երկու երկրների հարաբերությունների, նրանց արժեքների մասին նյութեր տպագրելիս, լինեն դրանք պատմական, գրական-մշակութային, տնտեսական, հոգևոր թե նյութական, պետք է դասեր քաղի համերաշխությունն ու բարեկամությունն այդքան կարևորած մեր մեծերից և չմոռանա նրանց պատգամները:

Չնայած լարված մթնոլորտին, այդուհանդերձ, ժամանակակիցների վկայությամբ Թիֆլիսում ամենուր՝ դրսում թե միջոցառումների ժամանակ, Թումանյանին ընդունում էին սիրով, պատկառանքով և ակնաձանքով: Վկայենք մեկական օրինակ հայկական և վրացական մամուլից: «Հատկապես հիշում եմ, – գրում է Տ. Տաբիձեն, – Հովհաննես Թումանյանի հոբելյանական հանդեսը «Տարտո» թատրոնի դահլիճում: Հանդիսասրահը լեփ-լեցուն էր: Խոսք ասաց Պաոլո Իաշվիլին... Նրա խոսքից հետո դահլիճը երկար ժամանակ դղրդում էր ծափողջուններից»<sup>2</sup>:

Արտակարգ ջերմ էր 1919 թ. մարտի 24-ի Ի. Գրիշաշվիլիի (1889-1965) կազմակերպած երեկոն, որտեղ բանախոսը «ողջույնի խոսք է հղում

<sup>1</sup> Գորցեալազա Ն., օջաբնյես տլումանոն // «Տախալո Տալմե», տծոլոսո, 1919, N 467.

<sup>2</sup> Գածոմե Գ., օջաբնյես տլումանոն // «Րլոծոկոնո», 8 ածրոլո 1923.

Թումանյանին, որից հետո հասարակությունը հոտնկայս, որոտընդոստ ու երկարատև ծափերով է դիմավորում օթյակում երևացած Հովհաննես Թումանյանին»<sup>1</sup>:

1919 թ. փետրվարի 15-ին Թիֆլիսում նշվում է վրաց ականավոր գրող, արձակագիր Դավիթ Կղիաշվիլիի (1862-1931) գրական գործունեության 30-ամյակը: Թումանյանը հայ գրողների ընկերության և իր անունից ողջույնի խոսք է հղում հոբելյարին՝ նրան համարելով իր պսակավոր եղբայրը և այն ընտրյալներից մեկը, որը նույնիսկ մայրենի լեզվի ու գրականության հալածանքի օրերին բարձր է պահել վրաց ժողովրդի հոգևոր կարողության դրոշը: «Էսօր՝ Ձեր գրական գործունեության երեսնամյակի հոբելյանին, ես որպես Հայ գրողների ընկերության նախագահ՝ թե՛ ընկերության կողմից և թե՛ իմ կողմից ցնձագին ողջունում եմ և լիասիրտ մաղթում եմ, որ ավելի երկար ու ավելի բարձր թնդացնեք վրաց ազնիվ ցեղի սրտի խոսքը»<sup>2</sup>:

Բանաստեղծի հետմահու կյանքում հետաքրքրությունը նրա նկատմամբ ավելի է մեծանում, և Թումանյան գրողի ձայնը առավել լայն տարածում է գտնում վրացական իրականության մեջ: Դա տեղի է ունենում Թումանյանի ևս մեկ չափազանց լուսավոր բարեկամի՝ բանաստեղծ Իոսեփ Գրիշաշվիլիի կախարդանքով: Թումանյանական երկերը նա թարգմանում է բանաստեղծի մահից մեկ տարի չանցած ժամանակում և լույս ընծայում ընդարձակ առաջաբանով<sup>3</sup>, որով անձիբ ու անհուն, զարմանահրաշ ու խորախորհուրդ մի նոր աշխարհ է բացում վրաց գրասերի առջև: Այդ թարգմանությունները գնահատվում են բնագրին համարժեք: «Բանաստեղծ Իոսեփ Գրիշաշվիլին Հովհաննես Թումանյանի հարագատ կրկնակն է,– գրում է բժիշկ, գրող, գրականագետ, հասարակական-քաղաքական նշանավոր գործիչ Իվանե Գոմարթեիլին: – Նրա թարգմանությունը թարգմանություն չէ. նույն բնագիրն է: Երբ դուք կարդում եք Գրիշաշվիլիի թարգմանությունը, ձեր առջև Հովհաննես Թումանյան վրացերեն երգիչն է, և համոզվում եք, որ այստեղ ոչ մի թարգմանություն էլ չկա, ինքը՝ Հովհաննես Թումանյանն է գրում վրացերեն»<sup>4</sup>:

Նույն առիթով բանաստեղծ Ռևազ Մարգիանին (1916-1984) գրում է, որ ունեն սքանչելի թարգմանությունների հատորյակը, որի շնորհիվ վրաց ժողովուրդը սիրեց Հովհաննես Թումանյանին, որ շատերն են գրել և

<sup>1</sup> «Աշխատավոր», 26 մարտի 1919:

<sup>2</sup> Թումանյան Հովհ., նշվ. աշխ., հ. 10, Երևան, 1999, էջ 345:

<sup>3</sup> Թումանյանի Թ., Ռեզուլի Նաջերեթի. Թարգմ. և ֆունասիտցյառնա Ի. Գրիշաշվիլիի, Թբիլիսի, 1924, 135 թթ.

<sup>4</sup> Գոմարթեիլի Ի., Օջանես Թումանյանի // «Թեատրի և Երկրագործ», 1924, N 17, թթ. 2-4.

ապագայում կրկին կգրեն, որովհետև, ըստ հայ և վրացի լավագույն մասնագետների այդ թարգմանությունները համարվում են նվաճում<sup>1</sup>:

Թումանյանի երկերի վրացերեն թարգմանությունը սեղանի գիրք է դառնում: Բանաստեղծությունների, պատմվածքների, հեքիաթների ու քառյակների մի շարք գոհարներ այդ թարգմանության շնորհիվ ներառվում են վրաց դպրոցական և բուհական դասագրքերում:

Խոստուն փաստ է, որ, նշված անձանցից բացի, բանաստեղծին նվիրված ծանրակշիռ խոսք են ասել շուրջ հարյուր հեղինակավոր գործիչներ, իսկ ներբողագիրների թիվը հասնում է երկու տասնյակի: Նրանց գրվածքներում Թումանյանը հառնում է իբրև երևելի գրող, լուսեղեն հանճար, համակովկասյան փարոս, ճակատագրի ընտրյալ, հաշտության մարգարե, բարեկամության ռահվիրա, միշտ բարեհոգի, կենսախինդ, ներշնչող, համակրելի, լույս ճառագող ժպիտով:

Վերոգրյալին հավելենք բնորոշ ևս մեկ-երկու օրինակ: Հայտնի հասարակական գործիչ Իոսեփ Իմեդաշվիլին նրան բնութագրել է իբրև «արևի առաջին ճառագայթ, վաղորդյան թարմաշունչ սյուք, վաղ գարնանն արթնացած ձնծաղիկ, մանուշակի ժպիտ» և եզրափակել. «Ահա թե ով է ինձ համար Հովհաննես Թումանյանը»<sup>2</sup>: Դասական գրող Վասիլի Բարնովը (1856-1934)՝ «Իսանիի արշալույսը» վեպի հեղինակը, նրա մասին գրել է. «Թումանյանը միշտ հավատարիմ է իր դավանած սկզբունքներին ու գաղափարներին, և բացարձակապես հակասություն չկա նրա տեսական դրույթների ու գեղարվեստական երկերի միջև: Ավելին՝ սիրո, գեղեցիկի, բարու և ճշմարիտի արարումով ու քարոզով, խավարի դեմ լույսն առատ դարձնելու պայքարով Թումանյանը՝ քերթողների մեջ ամենակատարյալը, կապող օղակ է ժողովուրդների միջև»<sup>3</sup>:

Պատերազմի ու հաշտության հարցը, որ այնքան կարևորում էր Թումանյանը, միշտ գտնվել է նրա ուշադրության կենտրոնում: Այս ասպարեզում ծավալվող բանավեճերի հիմնական ծանրությունը վերցնելով իր վրա՝ նա ձգտում էր անարձագանք չթողնել վիճարկող կողմերին թշնամացնելու նպատակով բանավոր ու գրավոր բանսարկությունները, հասարակական երևույթների չարամիտ մեկնաբանությունները, կրքեր բորբոքող զանազան խնդիրների արծարծումը, ազգային մեծերի հասցեին արված հերյուրանք-գրպարտանքները և այլն:

1900-1910-ական թվականները փոթորկուն, խառը և բարդ ժամանակներ էին Անդրկովկասում՝ լի քաղաքական ողբերգություններով, ծավալվում էին

<sup>1</sup> **Մարցոսնի Ռ.**, Կեմի Նալբանիսի Դիմի Թեգոճարի // «Լուցերատուրուլու Տախարտեղու», 19 Տեյեթեմբերի 1969.

<sup>2</sup> **Իմեդաշվիլի Ի.**, Վարդի թերթերից (տեսածը, զգացածը, խորհածը) // Ուղեցույց աստղը, Երևան, 1999, էջ 103:

<sup>3</sup> **Նարեցի Յ.**, Թեճուղեճանի, Թ. 10, Թեմիլիսի, 1964, ճՅ. 420.



հակաազգային քարոզներ, հրահրվում էին ազգամիջյան ընդհարումներ, սկիզբ էր առել պատերազմական իրավիճակ, խեղվել էր մարդկային հոգեբանությունը:

Դրկից երկրների շրջանում դա ավելի ակնառու դարձավ Վրաստանի անկախության հռչակումից մի քանի օր անց՝ 1918 թ. հունիսի սկզբից, երբ ակնհայտ դարձան մենշևիկյան կառավարության ղեկավարների նվաճողական նկրտումները: Նրանք նպատակադրվում են նոր տարածքներ յուրացնել, որոնց թվում նախատեսված էին գլխավորապես Լոռին և Բորչալուն: Սահմանային վեճերը խորանում են, հանգեցնում ռազմական ուժերի բախման, սկսվում են հայ բնակչության հալածանքները՝ կողոպուտ, առևանգում, կալանքներ, բնակիչների արտաքսում և այլ վայրագություններ:

Թումանյանի հոգսերը բազմապատկվում են: Նա ելքը տեսնում էր նախ՝ հայ և ռուս, ապա՝ հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունն ու համագործակցությունը ամրապնդելու մեջ, համոզված, որ «մոտիկ հարևանը լավ է, քան հեռու բարեկամը»: Նա իր ամբողջ էությանմբ նվիրվում է սովյալ նպատակի իրականացմանը: Նրա կենսագրությանը շատ թե քիչ ծանոթ ընթերցողին հայտնի են գերմարդկային այն ճիգերը, որոնք նա գործադրել է հայ և հարևան ժողովուրդների գիտակցության մեջ այդ մտքերը խորացնելու և ամրապնդելու համար: Նա, ի դեպ, Հայաստանի և Վրաստանի ղեկավարներին հորդորում էր առաջնորդվել ժողովուրդների մեջ սեր ու բարեկամություն հաստատելու գաղափարով, որովհետև «մեզնից ամեն մեկս պիտի սիրենք մեր հարևանի ազատությունը ու աշխատենք նրա համար, պարզ գիտակցելով էն հավիտենական ճշմարտությունը, որ մեկի երջանկությունը պայմանավորվում է մյուսի երջանկությունով»<sup>1</sup>:

Երբ պաշտոնյաների հետ բանակցություններում ջանքերը ցանկալի արդյունք չեն տալիս, մեծ մտածողը փոքր-ինչ փոխում է պետությունների ղեկավարների մասին արտահայտությունների տոնը. «Սրանց իշխողի, տիրողի հաստատուն դիրք է հարկավոր, էդ դիրքի համար փառք ու հաղթանակ է հարկավոր, փառք ու հաղթանակի համար կոտորած ու պատերազմ է հարկավոր, իսկ կոտորածի ու պատերազմի համար հարկավոր է ոչ թե ազատ խղճմտանքով, ինքնուրույն մտածող ու առողջ դատող մարդ ու ժողովուրդ, այլ միապաղաղ մի զանգված՝ անկամք և հնազանդ ու հլու ամեն հրամանի, նույնիսկ կոտորածի»<sup>2</sup>:

Հաշտեցման խնդրում վրացիներից Թումանյանին աջակցում էին առաջադեմ մի քանի մտավորականներ: Տ. Տաբիձեն, զգալով, որ «մեկ ուրիշի ձայնը չի հնչի և չի լինի այնպես ճշմարիտ ու հասկանալի, ինչպես լուսավորյալ բանաստեղծինն ու հայրենասերինը», և նկատի ունենալով Թումանյանի

<sup>1</sup> Թումանյան Հովհ., նշվ. աշխ., հ. 7, Երևան, 1995, էջ 374:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 372:

բացարձակ հեղինակությունը Անդրկովկասում, նրան բաց նամակ է հղում՝ հաղորդակից դարձնելով իր մտորումներին և անհանգստությանը<sup>1</sup>:

Վկայենք նաև Ս. Փիրցխալավային, որը «գեղեցիկն ըմբռնող և գեղեցիկն արարող հայ մեծատաղանդ բանաստեղծի» մասին գրում է. «Հայտնի է բոլորիս, թե խաղաղությունը վերականգնելու համար Թումանյանը որքան մեծ ջանքեր է թափում, ինչպես է արիաբար մարտնչում գրչով ու գործով, հաճախ ամեն պահ վտանգում կյանքը, որովհետև «հայ ժողովրդի վեհանձնագույն զավակը և վրաց ժողովրդի ամենասիրելի բարեկամը», առավել, քան որևէ մեկը, քաջ գիտակցում է երկու ժողովուրդների համերաշխության և ի վերուստ նրանց տրված պատմական առաքելության գինը»: Ըստ նրա՝ «այս պահին մեկմեկու ձեռք մեկնելը հույժ կարևոր է»<sup>2</sup>:

Այդուհանդերձ, Թումանյանը այդ ճակատում գրեթե մենակ էր: Ահա ինչ է գրում նրա մեկ այլ ժամանակակիցը՝ նշանավոր դրամատուրգ Շավա Դադիանին (1874-1959). «Երբ Վրաստանում և Հայաստանում իրար դեմ թշնամական ժանիքներ էին սրում, մտավորականության շրջանում Թումանյանի նման քչերը կային: Մենակ էր Հովհաննեսը. որք էր մնացել այս անվեհեր մարդն այն տխուր ու մռայլ օրերին՝ ժողովուրդների եղբայրության քարոզով... Սրտանց ցանկանում էիր, որ շատերն այդ որբի նման լինեին, նրա կողքին, բազմանային թե՛ մեզանում, թե՛ մեր յուրայինների մեջ, բայց այդ տխուր օրերին դա միայն երազել կարելի էր»<sup>3</sup>: Մեծ արվեստագետը գրել է նաև նրա կազմակերպչական ջանքերի, ծանրագույն իրադրություններից փրկության ելքեր գտնելու մասին:

Մենք համառոտակի անդրադարձանք վրացի գրողներից ու գործիչներից նրանց, ովքեր հանդիպել, մտերմացել, հաճախակի հավաքվել են բանաստեղծի հյուրընկալ հարկի տակ, խորհրդածել գրականության, արվեստի, Կովկասի ժողովուրդների անցյալի, ներկայի ու ապագայի մասին: Նրանք անջնջելի տպավորություններ են ստացել Թումանյանից և նրան գնահատել իբրև ժողովրդական հոգու վսեմ թարգմանի, մարդկային լավագույն հատկանիշներով օժտված հայրենասեր քաղաքացու՝ անմնացորդ նվիրված իր երկրին ու ժողովրդին:

### **Грачик Байрамян – Ованес Туманян – трибун армяно-грузинской дружбы**

Среди великих представителей мировой литературы редко встречаются писатели уровня Туманяна, которые беззаветно посвятили свою жизнь благому делу установления гармонии, мира, любви и дружбы. Гений нашего народа, с ранней юности проживая в столице Грузии, проявлял неослабевающий интерес к этой стране, тщательно изучал быт

<sup>1</sup> Թաճոճը Ե. Ըօա Ֆերոլի Օջանես Թումանյանս // «Տաթարտեցեղօ», 1919, N 1.

<sup>2</sup> Գորցնալազ Տ., Օջանես Թումանյանի // «Տաճալոճօ Տաթմե», 1919, N 467.

<sup>3</sup> Ուղեցույց աստղը, էջ 93-94:

грузинского народа, питал к грузинам теплые чувства. Грузинские писатели и литературные деятели выражали свои искренние и добрые чувства в статьях, стихотворениях, эссе, письмах, воспоминаниях. Они писали о человеческом обаянии великого поэта, его нравственных тревогах, организаторских способностях, умении находить выход из сложнейших ситуаций, поэтому нам представляется значимым факт представления оценки армянской общественности грузинскими авторами.

**Hrachik Bayramyan – *Hovhannes Tumanyan – an Advocate of Armenian-Georgian Friendship***

The great Armenian poet Hovhannes Tumanyan was always in close contact with Georgia. In his articles, the poet emphasized the great similarity of historical destinies of the Armenian and Georgian peoples and the unity of their national and public interests. He claimed that the representatives of the Georgian people always supported Armenia, and Armenians had been supporting Georgia for centuries. Concerning the clashes between the two neighbors, the great poet believed that the blame laid on the ruling circles whose interests often contradicted the interests of their own people and which played on the feelings of the crowd. Tumanyan collected various documentary materials related to the history of the Georgian people, translated them, conducted philological research, organized literary evenings, took part in all the events of the Georgian cultural life.